ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН АРМАВИРА
МУНИЦИПАЛИТЕТ ВАНАНДА

---

Թիվ 17

« 15 » 02 2012թ.

Արմավիրի մարզ գ.Վանանդ

հեռ.(0233) 6 - 12 - 22

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 8-ի թիվ 02 նիստի որոշումները:

Առդիր...

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ... 46006649 ... ՎԱՆԱՆԴ

համայ... ...ար Ջ. Մանուկյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1527-12
16 02 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

08. փետրվարի 2012 թ. թիվ 02 նիստի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թիվ 06

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

Համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 8-ի թիվ 02 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Աննման Ավետիսյան

Սամվել Թովմասյան

Այլազ Սլոյան

Վարդան Մախսուդյան

Վանանդ համայնքի ղեկավար Զ. Մանուկյան

2012 թվականի փետրվարի 8
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի գյուղական համայնքի ավագանու
2012 թվականի թիվ 06 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի

ավագանու թիվ 02 նիստի.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի փետրվարի 8-ի թիվ 02 նիստի օրակարգի հաստատումը:

   / Զեկ. Զ. Մանուկյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   / Զեկ. Զ. Մանուկյան/

3. « ՇԵՆԻԿ» ՋՕԸ-ին , Վանանդի երրորդ կարգի ջրանցքի վերականգնման ծրագրի իրականացման համար, համայնքի միջոցներից ներդրում կատարելու հարցը:

   / Զեկ. Զ. Մանուկյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

08. փետրվարի 2012 թ.

թիվ 02 նիստի

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 07-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Անանյան Ավետիսյան

Սամվել Թովմասյան

Այլազ Սլոյան

Վարդան Մախսուդյան

Համայնքի ղեկավար

Զ. Մանուկյան

2012 թվականի փետրվարի 8
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Վանանդի համայնքի
ավագանու 2012 թվականի թիվ 07-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ն որոշման մեջ կատարված փոփոխության

1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 30.0 հազար դրամ տեղափոխել ֆոնդային բյուջե:

2. Վարչական բյուջեի եկամուտների մասի
   - --դոտացիան պակասեցնել 1.7 հազար դրամ
   - --Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտները պակասեցնել 1000.0 հազար դրամ
   - --հողի հարկը ավելացնել 1.7 հազար դրամ
   - --օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց գանձվող այլ վճարներ նախատեսել 1000.0 հազար դրամ:

3 .Վարչական բյուջեի ծախսային մասի
   - --հողի օտարումից մուտքերը պակասեցնել 30.0 հազար դրամ
   - --11բաժնի 1խմբի 2 դասի 4891 հոդվածից 300.0 հազար դրամ ուղղել 01բաժնի 6 խմբի 1 դասի 4819 հոդվածին
   - --11բաժնի 1խմբի 2 դասի 4891 հոդվածից 1000.0 հազար դրամ ուղղել 01բաժնի 6 խմբի 1 դասի 4241 հոդվածին
   - --11բաժնի 1խմբի 2 դասի 4891 հոդվածից 915.0 հազար դրամ ուղղել 09 բաժնի 1 խմբի 1 դասի 4637 հոդվածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

08. փետրվարի 2012 թ. | թիվ 02 նիստի

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 08

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ – Հայաստան» ՊՈԱԿ-ի, «Շենիկ» ՋՕԸ-ի և Վանանդ համայնքիկողմից կնքված 2010 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 19 եռակողմ պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն, « Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում Վանանդի երրորդ կարգի ոռոգման համակարգի վերականգնման ծրագրի իրականացմանը ներդրում կատարելու համար, «ՇԵՆԻԿ» ջրօգտագործողների ընկերությանը հատկացնելու 10000000 (տաս միլիոն) դրամ:
2. Գնումը կատարել բանակցային ընթացակարգով՝ առանց հայտարարության:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Անժման Ավետիսյան

Սամվել Թովմասյան

Այլազ Սոյան

Վարդան Մախսուդյան

Վանանդ համայնքի ղեկավար | Զ. Մանուկյան

2012 թվականի փետրվարի 8
գ. Վանանդ